

## Օ Տ Ա Ր Ա Զ Գ Ի Ն

(Հէօնիդ Անդրեեւի)

Ուսանող Զիստեակովը առաւօտեան ժամը տամամէկից  
մինչև երեկոյեան ութը զբաղուած էր զանազան տներում գա-  
սեր տալով, իսկ համալսարան գնում էր միայն շաբաթը մի ան-  
գամ, չորեքշաբթի օրերը, երբ պարապմունքները աշակերտների  
հետ ուշ էին սկսում, այն էլ միայն մի րոպէով, որպէս զի պե-  
ղելը անունը նշանակէր դասախոսութիւն յաճախողների ցու-  
ցակում: Դասախոսութիւններին նա երբէք չէր յաճախում և  
նոյն իսկ չը գիտէր, թէ որտեղ էին գտնւում երկրորդ կուրսի  
իրաւաբանների լսարանները, որովհետեւ սաստիկ չէր սիրում  
պրոֆեսաորներին և մտադիր էր առաջիկայ գարնան ընդմիշտ  
գնալ արտասահման ու այնտեղ ապրել և ուսանել: Հէնց այդ էր  
պատճառը, որ այնքան աշխատանք էր յանձն առել, և այդ նը-  
պատակով էր, որ փող էր յետ զցում, իսկ երեկոները, գասերից  
վերադառնալուց յետոյ նստում էր ու գերմաններէն սովորում:  
Ճճուել էր գնալ Գերմանիա, Բեռլին: Մի տարուց ի վեր այն-  
տեղ ապրում էր նրա հին ընկերներից մէկը, որ շուտ-շուտ  
երկար ու ոգեորուած նամակներ էր գրում և իրաքանչիւր նա-  
մակում յորդորում էր նրան, որ նոյնպէս գնար Բեռլին:

Բայց երբեմն-երբեմն երեկոները Զիստեակովի զիսում  
ինչ որ բան ազմկուում էր՝ ջրաղացի անւի վրայից թափուող  
ջրի նման, յոգնած աչքերի առջև նշոյլին էին տալիս աշակերտ-  
ների անախորժ դէմքերը, և սաստիկ ցաւ էր զգում ձախ կող-  
քում: Այդ ժամանակ այլ ևս անկարելի էր պարապել, և նա  
կամ պառկում էր անկողնում և սկսում հաշւել կիտած փողե-  
րը ու երազել իր ապադայ բեռլինեան կեանքի մասին, կամ

գնում էր ներքե, վաթսունչորսերորդ համարը, ուր երեկոները սովորաբար հաւաքւում էին իր կեցած համարներում, «Հիւսիսային թեեռում» ապրող ուսանողները; Նա չէր սիրում այնտեղ հաւաքւող ուսանողներին, ինչպէս առհասարակ չէր սիրում իր շուրջը զտնուող ու կատարուող ամեն ինչ,— այն փողոցները, որով գնում-զալիս էր, այն սենեակը, որտեղ ապրում էր և առհասարակ այդ ամբողջ անկարգ-անկանոն, քառային, բարբարոսավարի կոսիտ և անհեթեթ կեանքը; Նոյնիսկ բարբարոսներից էլ վատթար էին թւում նրան իր տեսած բուլոր մարդիկը, թէ փողոցներում և թէ տներում,— բարբարոսները խիզախ մարդիկ էին, իսկ սրանք լոկ չէին յարգում ոչ իրանց, ոչ ուրիշներին, և յաճախ երեան էր զալիս նրանց մէջ բութ բռնութեան և տիմար անզթութեան սոսկալի ուրուականը; Բայց այն գիտակցութիւնը, որ ինքը ընդ միշտ հեռանալու է նրանցից և շուտով տեսնելու է ուրիշ մարդիկ, լաւ մարդիկ և ապրելու է օրինաւոր ու բարի կեանքով,— հաշտեցը նուում էր նրան մնացող մարդկանց հետ և տարօրինակ թախիծ ու մեզմ կարեկցութիւն էր զարթեցնում նրա սրտում; Եւ երբ նա զնում էր նրանց մօտ իր բարձր հասակով, իր նեղ ու հիւանդու կրծքով, զնաւուրի անարիւն դէմքով և տենդայնօրէն փայլող աշքերով, նրա յուշիկ «բարի՛ ձեզ»-ը հնչում էր իբրև տիսուր հրաժեշտի ողջոյն:

Իսկ ներքեում, վաթսունչորսերորդ համարում, միշտ տիւրում էր անհոգ ուրախութիւն ու աղմուկ; Այնտեղ սասաթիկ շատ զարեջուր էին խմում ու ծխում, երգում ու զուգուում և քընում էին և տախտակամածի, և բազմոցների վրայ, ուստի և օզը կապտաժեռ էր ու ծանր, տոգորուած գինոգու (սպիրտի) և տառեխի հոտով, և ամեն բանում տիրում էր այնպիսի յարատե ու անյաղթելի անկարգութիւն, որ Զիստեակովին երբեմն թւումէր, թէ այդ էլ մի առանձին տեսակ կարգ է:

Մենեակի տէրերն էլ, Վան'կա Կոստիւրինը և Պանովը՝ շատ նման էին իրանց սենեակին, — նոյնպէս անկարգ և նոյնպէս անկարգութիւնը օրէնք դարձրած, նրանք առաւօտեան թէյի տեղ օղի կամ դարեջուր էին խմում, գիշերները լուացնում էին, իսկ ցերեկները քնում:

Շատ քիչ գոյք ունէին նրանք, բայց պատուհանների վրայ միշտ շարուած էին լինում զանազան մեծութեան զատարկ շըշեր և մի լաւ դաշնակարան (հարմոնիում), իսկ պատի վրայ՝ մի դափի և մի եռանկիւն; Այն ժամանակից ի վեր, երբ նոյն համարներում ապրող մի ուսանող, սերը Ռայլո Վուկիչը, մի զիշեր դափն առած անցուղարձ արեց միջանցքում՝ և սարսափելի

վախեցրեց բոլոր կացողներին, որոնք դուրս պրծան սենեակներից՝ կարծելով թէ տունը կրակ է ընկել,—սպասաւոր Սերգէյը ամեն երեկոյ ժամը տասնմէկին դալիս, դափը տանում էր մինչև միւս առաւօտ, իսկ առաւօտեան յետ էր բերում՝ երկու շիշ դարեջուր էլ հետը, և երկարաբեխ Վանկա Կոստիւրինը, որ առաւօտները շատ մուզլ էր լինում, դափ ածելով մի կարճ ու ձույլ տաղ էր ասում: Այսուհետեւ լրաւմ էին դաշնակարանի հնչուն և ուրախ գեղգեղանքները—և սկսւում էր անհեթեթ և Զիստեակովի համար անհասկանալի օրը:

Երբ երեկոյեան վաթսունչորսերորդ համարն էր դալիս նեղուրծք, հիւանդու Զիստեակովը, վրան կրելով աշխատաւոր օրուայ և կենսական խիստ որոշ նպատակի հետքերը, ընկերական խումբը հանդիպում էր նրան թեթև հեգնութեամբ և անբարեացակամութեամբ:

—Օտարազգին դալիս է,—յայտարարում էր Վանկա Կոստիւրինը: Եւ ուսանողները ծիծաղում էին, որովհետեւ Զիստեակովը՝ ամբողջ դէմքովը, երկար մազերովը և ուսանողական անազգեստի (տյշորկա) տակից երկացող կապոյտ վերնաշապկովը՝ ամենից քիչ էր նման օտարազգուու: Արտասանութիւնն էլ կատարեալ վելիկոսասական էր՝ փափուկ, կոկ և մտածկոտ:

Ուսանողները նրան չէին սիրում այն պատճառով, որ նա բոլորովին անտարբեր էր գերաբերւում նրանց կեանքին, չէր հասկանում այդ կեանքի հրձուանքները և նմանում էր մի մարդու, որ երկաթուղու կայարանում նստած սպասում է զնացքին, ծխում, խօսում է, նոյն իսկ կարծես գրաւում է, բայց աչքը ժամացոյցից չի հեռացնում: Իր մասին ոչինչ չէր պատմում, և ոչ ոք չը գիտէր, թէ ինչու քասնինը տարեկան հասակում հազիւ երկրորդ կուրսումն է, բայց յաճախ և շատ մանրամասնօրէն խօսում էր արտասահմանի և արտասահմանեան կեանքի մասին: Եւ ում որ առաջին անգամը տեսնէր՝ մեղմ հրձուանըով կը պատմէր մի լուր, որ չը գիտեմ՝ որտեղ էր լսել և երր, այն է՝ թէ Խրիստիանիայի ամենալաւ հրապարակում ժողովուրդը երկու գեղեցիկ յուշարձան է կանգնեցրել Բեօնսանին և իբսէնին նրանց կենդանութեան օրով, և Բեօնսանն ու իբսէնը այդ հրապարակով անցնելիս տեսնում են անեղծ մետաղից շինած իրանց արձանները և այնքան խանդաղաւում են ժողովը դական սիրոյ այդ ցոյցից, որ երկուան էլ լաց են լինում: Եւ այդ պատմեին Զիստեակովը հայեացքը դարձնում էր մի կողմ, և աշքերը արտասուակալում էին ու կարմրում:

Սիրում էր նա խօսել նոյնպէս այն բանի մասին, թէ որ-քան փող է յետ գցել արտասահմանի համար, այն է՝ երկու հա-

բիւր քսան բուրլի, և մի անգամ նոյնիսկ բոլոր ուսանողներին ձանձրացրեց զանգատուելով. թէ մի ընտանիքում լրբարար տասնմէկ բուրլի կարեցին նրա դասավարձեց. Առանց ալլայլ լութեան վարձը կարեցին. իսկ երբ սկսեց պահանջել, սկզբում ծիծաղեցին վրան, իսկ յետոյ գուրս արին:

—Արիւն-քրտինքով վաստակած փողերս կտրեցին, —առում էր նա զայրոյթով ու թախծով; —Որ լաւ հաշենք, գուցէ դուրս գայ, որ երկու տարուայ կեանք եմ մաշել այդ փողը վաստակելու համար;

— Լաւ, հերիք է նուաս, — վրայ բերեց Վանկա Կոստիլինը, — կուղբաս, մեր մէջ հաւաքենք քեզ համար այդ տասնմէկ բուրիխ:

Կռատիւրինը պարզ սրտով առաջարկեց այդ և շատ զար-  
մացաւ ու վիրաւորեց, երբ Զիստեակովը վրդովմունքով մեր-  
ժեց իր առաջարկութիւնը:

— Ընկեր-տղայ չես, — ասաց Կոստիւրինը յանդիմանութեամբ, և ամենքը համաձայնեցին, որ Զիստեակովը ընկեր-տղայ է:

Այդ երեսում էր նաև այն բանից, որ նա արհամարհական անտարբերութեամբ էր վերաբերում ուսանողական բոլոր շահերին, — ինչըան էլ կարեոր բան պատահէր, որքան էլ տաքանային ամենքը գալթունչորսերորդ համարում, նա լուռ կը մնար, մատոներով մտքամոլոր կը դափահարէր սեղանը, իսկ եթէ վիճաբանութիւնները երկարէին, կը սկսէր յօրանցել ու վեր կը կենար, կ'երթար գերմանէրէնով պարապելու;

— би аյսთხეყի մարդ չեմ, — կ'ասէք՝ կատակի ձեռվ ներուցութիւն խնդրելով, բայց նրա կատակում ինչ որ տարօրինակ և չը գիտեմ ինչու վիրաւորական ծշմարտութիւն կար; Եւ միւսների համար անախորժ էր զգալ, որ իրանք ամեննեին չեն ճանաչում այդ նեղկուրծք մարդուն, որ այդպէս ուղղակի դիմում է զէպի իր նպատակը և չի ուղում ասել, թէ որտեղից է այդքան ոյժ ու վճռականութիւն իր հրամդում կրծքում; Նրան չէր սիրում մանաւանդ Վան'կա Կոստիւրինը; Սա բարձրաձիտ կօշիկներ էր հազնում, ամառն էլ զիւղում եղած ժամանակ զիւղացվարի էր հազնում, սիրում ու յարգում էր ամեն ինչ, որ ոռւսական է, օղի, կվաս, իւղալի չչի ու մուժիկներին, և աշխատում էր խօսել Կոպիտ ձայնով ու ռամկացվարի, — кажется-ի տեղ կայսէ էր ասում և չուտ-չուտ գործ էր ածում ձաւեա բառը; Նա չէր հասկանում Զիստեակովի յամառ ձգտումը զէպի արտասահման և չը գիտեմ ինչու նրան դասում էր այնպիսի երևոյթների կարգը, ինչպէս են սպիտակ ձեռնոց-



ները, երբէք չը գինովալը, այցելութիւնները և նորատարազ կօշկիները, Զիստեակովին բնորոշելու համար, բայցի «ընկեր-տղայ չէ» խօսքերից, նա գործ էր ածում երկու մակղիր—արիս-տոկրատ և շան ճրադ:

Միւսները անտարբեր էին վերաբերւում զէպի ամեն ինչ, որ ոռւսալիան է, յաճախ նոյնիսկ պամարակում էին զուտ ոռւսական բաները և ասում էին Զիստեակովին, թէ իրանք էլ ուրախութեամբ կ'երթային արտասահման ապրելու և սովորելու, եթէ փող ունենային: Իսկ Զիստեակովը յորդորում էր նրանց, ապացուցանում էր, թէ փող միշտ կարելի է գտնել, յուզելում էր, բայց յետոյ ուշագրութեամբ նայում էր նրանց բարեսիրտ, կիսահարբած ունեներին, յիշում էր նրանց մշտական ծոյլ ու զեղս կեանքը և անտարաբերութեամբ լուռմ: Նստում էր մի անկիւնում, ճիւրտուած անկողիններից մէկի վրայ և այտեղից՝ վերին աստիճանի գունատ, նեղկուրծք ու վճռական՝ դիտում էր միւսներին իր փայլուն ու հեռուն նայող աշքերով:

Իսկ միւսները ուրախ զուարթ ապրում էին իրանց համար երիտասարդութեան ու առողջութեան անհոգութեամբ, կարծես թէ ոչ երէկ կար նրանց համար, ոչ էզուց, ոչ էլ անիւծեալ հարցեր, որ անիծեալ իրականութիւնը բերում է իր հետ և այսաթիկունք, մաղոս, հաստավիզ, մանրաճքանի ու բթահայեաց Տոկաչով ցոյց էր տալիս մկանների ոյժը, կշռաքարեր էր բարձրացնում և ամենքին ստիպում էր նայել ու հիանալ իր վրայ, — նա մարմնամարզական ընկերութեան անդամ էր, ոյժից զատ ոչինչ չէր ընդունում և բացէիրաց արհամարհում էր համալսարանը, ուսանողներին, գիտութիւնը և ամեն տեսակ հարցեր: Շատերն էլ նրան ատում էին, բայց վախում էին նրա վիթիսարի ոյժից, նրա կոպտութիւնից, որ ոչնչի առաջ կանգ չէր առնում, և նոյիսկ յետերից չէին համարձակւում վատ խօսել նրա մասին: Եւ երբ որեէ մէկը, համբերութիւնը հատած, ակրատում էր վիճել հետք, միշտ այսպիսի խօսքերով էր սկսում վէճը.

— Ի հարկէ, ամեն մարդ իրաւունք ունի այս կամ այն համոզմոնքն ունենալ, բայց կարծեմ դու, Կոստեա, սխալում ես...

Իսկ նա այդպիսի նուրբ քաղաքավարութիւններ չէր հասկանում և առանց այլեալութեան վերջ էր տալիս վէճին.

— Արժէ միթէ ձեզ պէս յիմարների հետ վիճել: Եթէ ձեր իրաւունքը ինձ տային, ամեն օր բոլորիդ էլ ախոռատանը ճիպոտով կը ծեծէի:

Եւ ամենքը ձեացնում էին, թէ նա կատակ է անում, ու ճիծաղում էին: Սենեակի տէրը, Պանովը, սոխ էր չոթում տա-

ուեխի համար ու լաց էր լինում. Ռայկօ Վուկիչը, —մի ցածրահասակ սերբ՝ չոր, ջլուա, կորաքիթ, սուր ու երկգիւղ կզակով, որի վրաց բուսնում էր ծակծկող խողանաձև միրութ, ու կափ ընկած բեխերով, —լուռ նայում էր օղին, սպասելով, թէ երբ կածեն բաժակները: Նատ տարօրինակ մարդ էր այդ Ռայկօն: Սթափ ժամանակը լուսում էր, իսկ երբ մի քիչ օղի էր խմում, սկսում էր կոստուած ու ծիծաղելի սուսերէնով տաք-տաք ու յամառ կերպով պատմել Սերբիայի մասին՝ ինչ որ մանր-մունք ու անհետաքրքրական բաներ, —կուսակցութիւնների մասին, արմատականների ու թիւրքերի մասին, ինչ որ Բողեմիի ազգանունով անպիտան ու սարսափելի մարդու մասին և էլի ինչ որ մի բանի մասին Եւ այնքան գովում, փառաբանում էր իր փոքրիկ ու քոնճուտ Սերբիան, որ ամենքը ծիծաղից թուլանում էին ու սկսում էին ձեռք առնել նրան:

—Տէր Աստուած, —զարմանում էր Վան'կա Կոստիւրինը: —Մեծ-մեծ խօսում է Սերբիայի մասին, բայց որ հարցնես, ամբողջ Սերբիան հազիւ այս տառեխի չափ լինի: Որ թիւրքը ուղի, ամբողջապէս բերանը կը դնի ու կուլ կը տայ:

—Յկումը գէմ կ'առնի, —առարկում էր Ռայկօն, քստմնելով բեխերով, կզակով, սուր-սուր ու մանր աչքերով և առնասարակ իր ամբողջ փաքրիկ փշչուտ ու ջլուա կերպարանքով:

—Կը թքի, գէն կը ցցի. կ'ասի՛ ինչ անպիտան բան է եղել: Ռայկօն կարմրատակում էր, բարկացած աչք էր ածում բոլորին և կատաղած շպատում էր.

—Եշեր:

Ու գնում էր իր համարը: Ընկերները հոհուում էին, իսկ Զիստեակովը, տփուր-տխուուր ժպատլով՝ մտածում էր, —այ քեզ յիրաւի փոքրիկ ու տփուր երկիր՝ կոււրար ու թոյլ բնակիչներով, ուր միշտ անկարգութիւն է տիրում, և ուր ամեն ինչ մանր է ու ողորմելի, ինչպէս զինուոր ձևացող երեխաների խաղը: Եւ խեղճը գալիս էր փոքրիկ Ռայկօի վրայ, և սիրտն ուզում էր նրան էլ իր հետ արտասահման տանէր, որպէս զի այնտեղ իսկական, լայն ու խելացի կեանք տեսնէր:

Եշերը կիսով չափ դատարկուելուց յետոյ՝ ուսանողները սկսում էին երգել ու նուազել և մէջներից մէկին ուղարկում էին Ռայկօի յետելից, որ դափ ածելում մասնագէտ էր համար-ւում: Ռայկօն գալիս էր ու սկսում էր մոայլ զէմքով դափ ածել, իսկ աչքերը վառում էին գայլի աչքերի պէս և այնպիսի սուր հայեացը, ինչպէս կրէտի խայթոցը: Եթէ սկսում էին շատ ուրախանալ, և տպացած արիւնները սկսում էր եռ գալ երակներում, Վան'կա Կոստիւրինը տեղիցը վեր էր թռչում, ու-

սերը թօթւում էր ու պարում էր ոռւսաց ժողովրդական պարը, Պէտք էր տեսնել, թէ ինչպէս այդ ծանրալաշ ու անչսորհք մարդք զարմանալի թեթև կերպով պարում էր ու փետուրի նման թռչում սենեակի մէջ, ինչպէս կրնկով կտկտացնում էր տախտակամածը, ճշում, բղաւում, և ամբողջ սենեակլը կարծես պտոյա էր գալիս ու զողում նրա ստնաձայնից, զաշնակարանի կլիան հնչիւնսերից և դափի որոտագոչ դըմդըմբոցից; Եւ բոլոր նալողների աչքերը փայտում էին, ոսկրները շարժ էին գալիս, և մէկը կամ միւսը քաշում էր մի անկիւն, յուսահատ հրճուանքով թափ տալիս ձեռքը և կրծքի խորքերից սրտմաշուկ ու քաղցր հառաչ արձակում, Եւ բոլորը գգերի նման էին թւում Զիստեակովին:

Պարը վերջացնելով՝ Վան'կա Կոստիւրինը հեին ինդրում էր Ռայկօին.

— Դէ, թէ տղայ ես, Ռայկօ, ցնյց տուր, թէ ինչպէս են պարում ձեզնում։ Այսպէս հօ չեն կարող են։

— Այդպէս չեն կարող, բայց աւելի լաւ կարող են։

— Որ այդպէս է, մի վախեցիր, ցնյց տուր, Ես գիտեմ, ձեղնում լաւ են պարում։

Ամենքը խնդրում էին, և Ռայկօն, վախկոտ ու զայրացկոտ հայեացք գցելով շուրջը, դէն էր դնում դափը, Յեաոյ գէմքը վայրագ ու արիւնարբու արտայալտութիւն էր ստանում, և նա մի քանի տարօրինակ, թափոտ ու ծակող շարժումներ էր անում— կարծես ոչ թէ պարելու էր, այլ խեղդելու, ճանգատելու և սպանելու։ Այդպէս՝ առանց նուազածութեան՝ լուրջ ու մի քիչ ահանելի արտայայտութեամբ պարելով, նա այնքան նման էր փոքրիկ վայրենիի, որ ամենքը քրքիջ էին բարձրացնում, և նա նորից վերառուում էր, սկսում էր հայենյել ու դուրս էր գնում սենեակից։

« Ե՞նչ կոպիտ մարդիկ են»—մտածում էր Զիստեակովը, և խեղճը գալիս էր փոքրիկ Ռայկօի վրայ, որ այնքան սաստիկ սիրում էր իր փոքրիկ հայրենիքը։

Վաթառնչորսերորդ համարում լինում էր նաև մի ուսանող կարուեւ ազգանունով, միշտ սիատեսակ տրամադրութեամբ, միշտ ուրախ, և փոքր ինչ գոռող, նրա եղած ժամանսակ ամեն ինչ փոքր ինչ փոխում էր,—միայն լաւ երգեր էին երգում, ոչ ոք Ռայկօն ձեռք չէր առնում, և ուժեղ Տոլկաչովը, որի ոչ ամբարտաւանութեանը չափ կար, ոչ ստորաքարշութեանը, կամակատարութեամբ օգնում էր նրան վերարկուն հագնելիս։ Իսկ կարուեւը երբեմն դիմամբ իրը թէ մոռանում էր նրան բարեւել և ստիպում էր զանազան խաղեր անել՝ վարժուած չան նման։

— Դէ, մսի կտոր, բռնի սեղանի ոտքիցը ու բարձրացրում  
Տոլկաչովը ինքնագոհ կերպով բարձրացնում էր սեղանը:

— Դէ հիմի ծոփ այս քսանկոպէկանոցը:

Տոլկաչովը ծոռում էր ու ամաչկոտ կերպով ասում:

— Իսկ հայրիկս կրակբաշիկից օղակ էր շինում:

Բայց Կարուեւը արդէն այլևս չէր լսում նրա ասածը և  
զնում էր խօսելու միայնակ նստած Զիստեակովի հետո Զիս-  
տեակովի հետ նա միշտ լուրջ էր լինում և բժշկի պէս կարեկցո-  
րէն ուշտղիք, և խօսելիս մօտկից ու փաղաքօրէն նայում էր  
աչքերի մէջը: Զիստեակովն էլ խղճում էր նրան և միշտ հա-  
մոզում էր, որ իր հետ զնայ արտասահման:

— Հը, զնո՞ւմ էք, — հարցնում էր Կարուեւը:

— Երկու հարիւր քսան կայ: Հարիւր ութսուն էլ դեռ  
պէտք է: Իսկ դուք, — ժպտում էր Զիստեակովը:

— Ես՝ չէ: Դժուար կը լինի ձեր բանը այստեղ, հոգիս:  
Զեր առողջութիւնը...

— Այստեղի կիման լաւ է:

— Ճիշտ է, բայց աւելի լաւ կը լինէր կրիմ զնայիք...

Զիստեակովի գունատ դէմքը աւելի ևս զունատուեց և  
կոպերը կարմրատափեցին: Կակծից ու սարսափից դողալով,  
կարծես թէ սրտիցը պոկում էին իր արտասահմանը, շնչաց  
վշտահար ու յուսահատ:

— Ես այստեղ կը մնոնեմ: Կը մնոնեմ: Տէր Աստուած, այն-  
տեղ մարդիկ կան, այստեղ կեանք կայ, իսկ այստեղ... — նա  
յուսակտուր թափ տուեց ձեռքը:

— Դէ լաւ, դէ լաւ, հանգստացնում էր նրան կարուեր:

— Որ այդքան ուզում էք, զնացէք, Տէր ընդ ձեզ:

— Այստեղ, զիտէք, — խանգաղատօրէն շնչում էր Զիստեա-  
կովը, — այստեղ Խրիստիանիայում Բեօննաօնին արձան են կանգ-  
նեցրել կենդանութեան օրով: Նոյնպէս և իրակնին: Եւ նրանք  
ամեն օր... անցնում են մօտովը ու տեսնում այդ: Տէր Աս-  
տուած: Գէթ արժանանայի միայն ոտք դնել այդ հողի վրայ,  
գէթ մի անգամ նշել այդ օտք... Կուրծքս թոյլ է. շատ կա-  
րելի է, ասում են, թոքախտ ունեմ: Երանի այստեղ մնոնէի:

Կարուեւը փաղաքօրէն գգուեց նրա ծունկը:

— Զէր մնոնիլ: Մեզ բոլորին կը թաղէք: Ինչպէս երեսում է՝  
կեանքը կարգին ճմոնէ է ձեզ: Շատ ջղային էք:

— Ջղային, — ժպտաց Զիստեակովը: — Ի՞նչ ջղեր, այստեղս  
է, — նա խիեց իր կրծքին, — այստեղս է այրել-խորովել ձեր  
կեանքը:

Եւ սկսեց պատմել, թէ ինչպէս արտասահմանում ամեն ինչ  
Մայիս, 1903.

էժանէ, և սիայն մարդիկ են թանկ, և ոչ թէ այնպէս, ինչպէս  
Ռուսաստանում, որտեղ ամեն ինչ թանկ է, իսկ մարդիկ՝ էժան:

## II

Տարուայ երկրորդ կէսին Զիստեակովի վիճակն աւելի  
գժուարացաւ: Ուժը պակասեց, ձախ կողքը սկսեց աւելի յաճախ  
ցաւել, և զասերին շատ հեշտ էր գրգռուեմ, մանաւանդ որ  
աշակերտները բժամիտ էին, ծոյլ ու յանդուզն: Վաթուունչորսե-  
րորդ համարի ուսանողական կեանքն էլ զէպի վատը փոխուեց:  
Այդ համարում մի դէպը պատահեց, որ ամենքը շատ շուա  
մոռացան, բայց Զիստեակովը չը կարողացաւ մոռանալ, որով-  
հետեւ այդ դէպը շատ կակիծ պատճառեց նրա սրտին: Նոյեմ-  
բեր ամսին էր. ուժեղ Տոլկաչովը՝ չը գիտեմ ինչու՝ կրիւ սկսեց  
վանկա կոստիւրինի հետ ու ապտակեց նրան: Երեկոյ էր, զի-  
շերուայ մօտ էր. ուսանողները խմբով կանգնած էին բակում.  
բոլորն էլ թունդ հարրած էին և պարզ չէին հասկանում եղածը:  
—Ինչու ես խփում,—գոռաց կոստիւրինը:

—Այ թէ ինչու,—ասաց Տոլկաչովը և մէկ էլ այնպէս  
խիեց, որ կոստիւրինը երկուատակուեց, քիչ մնաց վայր ընկնէր,  
և ատամները արնոտեցին: Բոլորն էլ յօնքերը կիտեցին, սկսե-  
ցին գոռգոռալ, բայց ոչ ոք սիրտ չ'արեց միջամտել, և միայն  
Զիստեակովը՝ հիստերիկական ճիշ արձակելով յարձակուեց  
զիթխարի Տոլկաչովի վրայ ու անչնորհք կերպով խփեց նրան,  
այնպէս որ իր բութ մատը ցաւացրեց: Յետոյ ինչ որ ծանր  
բան՝ փթանոց քարի նման իջաւ գլխին, նա վայր ընկաւ, իսկ  
երբ տեղից բարձրացաւ, բոլորը շրջապատել էին նրան ու վր-  
րայ էին պրծնում դէպի Տոլկաչովը, բայց չէին խփում, այլ մի-  
միայն գոռգոռում էին: Բայց և այնպէս Տոլկաչովը մի քիչ  
վախեցաւ ու սկսեց արդարանալ, աշխատելով մեղքը դցել կոս-  
տիւրինի վրայ, որ մի կողմ կանգնած՝ սև լորձունք էր թքում  
ձեան վրայ ու ասում:

—Միթէ այսպէս կարելի՞ է, աղերք:

Տաս բոլորից յետոյ Տոլկաչովին ու կոստիւրինին հաշտեցը-  
րին: Նրանք ձեռք տուեցին իրար ու համբուրուեցին, իսկ Զիս-  
տեակովը ձեռները իրար խփեց ու լաց եղաւ ցաւից, կսկծից  
ու զայրոյթից:

—Տէր Աստուած, համբուրւում է իրան ծեծովի հետ: Այդ-  
քան էլ ստորութիւն:

—Քիզ ինչ, —ուսն ի վեր հարցրեց Տոլկաչովը: —Ուղարկ ես,  
բոնիմ քեզ, կտրով այն կողմը զյեմ:

— Օտարազգին, — արհամարհաբար ասաց կոստիւրինը, ու  
ամենքը զուգառայով ու ծիծաղելով՝ գնացին դէպի դարպասը,  
իսկ Զիստեակովը բարձրացաւ իր սենեակը, պառկեց ու այդպէս  
պառկած երկար ժամանակ լալիս էր մութ տեղը: Բանութիւնը,  
անարդարութիւնը թուխափ պէս կանգնած էին նրա զիսին, և  
հեռաւոր, անմատչելի դրախտ էին թւռում նրան օտար, լուսա-  
ւոր երկիրները: «Երանի մի տեսնեմ ու թէկուզ իսկոյն մեռ-  
նեմ», — տառծում էր նա սրտմաշուկ կարօտով:

Միւս օրը Կոստիւրինը ամաչեց իր արածից ու գնաց Զիս-  
տեակովի սենեակը, ուր մինչ այդ երբէք ոտք չէր դրել: Ներս  
մտնելով՝ նա երկար ժամանակ շփոթուած աչք էր ածում չորս  
կողմը ու գովում սենեակը:

— Ի՞նչ լաւ է այստեղ: Կարծես կոյսի խուց լինի, — ասաց  
նա ու յանկարծ սկսեց լալ, և մի կողմ՝ ծոռւած երկար բեխերի  
վրայով սկսեցին դլորուել ու ընկնել հիւրանոցի կեղտոտ սեղա-  
նի կարմիր մահուղի վրայ արցունքի խոշոր ու վճիռ կաթիւ-  
ներ: Իսկ մի շաբաթ անցած ամեն ինչ մոռացուեց, և Տոլկաչովը  
նորից սկսեց հիացնել ամենքին իր մկանների ոյժով, բայց Զիս-  
տեակովը չէր կարողանում այլ ևս առանց սարսափի նայել նրա  
կարմիր ու հաստ վզին ու ահադին բռունցքին և միշտ նրա ներ-  
կայութեամբ այնպէս թոյլ ու անօգնական էր զգում իրան, ինչ-  
պէս հաւի ձուլոր բաղէի առաջ: Կոպիտ, անամնական ոյժը իրոխ-  
տարար կանգնած էր նրա առաջ, և չը կար մէկը, որ պաշտպա-  
նէր նրան: Այնուամենայնիւ այլ ևս ձեռք չէր տալիս Տոլկաչո-  
վին, սակայն սա առաջին անգամը արհամարհական ու անկեղծ  
քրքիջով ընդունեց այդ և այնուհետև յաճախ ասում էր նրան.

— Հը, օտարազգի, չժաւ ևս արտասահման ջնաննամուելու,  
Շնուտ արա, թէ չէ մի օր սատանան ականջիս կը փչի, ու կը  
բռնեմ, կողքեի ոսկորները կը հաշւեմ:

Զիստեակովը զարհուրում էր. նա բան չէր ասում ու մր-  
տածում էր ինքն իրան՝ «մինչեւ անգամ չի էլ հասկանում, որ  
անվայել բան է խօսել մէկի հետ, որ իրան ձեռք չի տալիս»:  
Իսկ Տոլկաչովը հոհուում էր.

— Մի վախեցիր, կատակ ևմ անում: Ինչիս է պէտք քեզ  
պէս շան ճրագը:

Եւ ամենքը ազատ շունչ էին քաշում, որովհետեւ վախե-  
նում էին, որ Տոլկաչովը ճիշտ որ կը ըսնի ու կը ծեծի նրան,  
և երբեմն սկսում էին համոզել Զիստեակովին, որ հաշտուի  
հետը:

— Իսկապէս շատ լաւ տղայ է, — ասում էին կիսով չափ ան-  
կեղծօրէն, որովհետեւ յետեկից էլ սիրտ չին անում ճիշտ խօսել

Տոլկաչովի մասին և նոյն իսկ չէին համարձակւում անկեղծօրէն մտածել նրա մասին։ Եւ միմիայն կարուեւն ասաց, որ հաւառնում է Զիստեակովի արածին, ու գրեթէ ոտքը կտրեց վաթ-սունչորսերորդ համարից։

Զիստեակովի փողը արդէն հասել էր երկունարիւր իննուունի, և յոյս կար, որ գարնանսամտին, ապրիլին, չորս հարիւրը կը լրանայ։ Աւելի էլ կ'ունենար, բայց մի վաճառական գարձեալ վարձը կտրեց, տասը բուրլի պակաս տուեց, թէն խոստացել էր տալ, և բացի այդ՝ Զիստեակովը տասնհինգ րուբլի տուեց Ռայկօին, որ տանից գրեթէ ոչինչ չէր ստանում և ընկերների հաշւով էր ապրում (նրա սենեակավարձի մասը Վանկա Կոստիւրինն էր տալիս)։ Այդքան փող ունենալով գըրպանումը՝ Զիստեակովը աւելի հանգիստ էր ու վստահ։ Ամբողջ երեկոներ սենեակումը նստած երազում էր, թէ ինչպէս հիանալի կ'ապրի արտասահմանում, և արդէն սկսել էր մանր-մունք բաները դարսել ճանապարհի համար։ Եւ երբ այդ իրերը գարսում էր, սիրտը լցուում էր մեղմ ու աղբիւրի ջրի նման վճիտ թափծովի, ինչ որ հեռաւոր, անյայտ ու քաղցր բանի կարօտով, և միշտ թւում էր, թէ մոռանում է վերցնել հետը ինչ որ մի բան, ինչ որ սաստիկ կարեսը և թանկագին բան, առանց որի շատ անախորժութիւնների է հանդիպելու արտասահմանում։

Ընկերներին սկսել էր աւելի մեղմ վերաբերուել, չէր բարկանում վրաները, այլ միմիայն խղճում էր նրանց։ Խղճում էր, որ մնում են Տոլկաչովի հետ, խղճում էր, որ այնքան շատ խմում են, և որ նրանց կեանքն էլ ուրիշների կեանքի նման գժգոյն է լինելու և տաղակալի, ու ոչինչ չէ յաջողելու նրանց այն լաւ բաներից, որոնց մասին երազում են երրեմն։ Վայրենի երազի նման օտարոտի, քառսային, մղձաւանչային կեանքը կլանելու է նրանց, ինչպէս լափել է հազարաւոր ուրիշներին, և ի զուր կ'անցնեն նրանց ջանքերը՝ մի ուրիշ, լաւագոյն կեանք ստեղծելու։ Եւ մանաւանդ խղճում էր եռանդուն և խիղախ կարուելին, որ ուզում է զիլսովը պատը քանդել ու վերջին ժամանակները սաստիկ մուլլացել է ու գիւրագրգիռ գարձել։

—Արի գնանք, —համոզում էր Զիստեակովը։

—Ուր, —չէր հասկանում կարուեւը։

—Արտասահման էլի։

Կարուեւը գրգռուած պատասխանեց։

—Ես էլ կարծում եմ՝ ինչ է ասում, —բայց իսկոյն զսպեց իրան ու քաղաքավարի աւելացրեց։ —Ի հարկ է, ինչո՞ւ էք մը նում, գնացէք։ Կը բժշկուէք, ջղերգ կը հանգստացնէք։

—Ուզում եմ ամառը Շվեյցարիայում ապրել։

— Եատ լաւ կ'անէք, — գովեց կարուեւը և քաղաքավարի մաս բարե ասաց, ինչպէս մի անծանօթ մարդու, ինքն էլ ուր որ զնալու էր առժամանակ:

Մարտի մէջերթին վաթսունչորսերորդ համարի տէրերից մէկի, Պամովի, անուանակոչութեան օրն էր: Նա հրաւիրել էր նաև Զիստեակովին: Արդէն ձիւնը վեր էր կացել, և սահնակներին փոխարինել էին անւաւոր կառեր: Երբ Զիստեակովը դուրս եկաւ վերջին դասից, գարնանամտի քաղցր թարմութիւն ու ջերմութիւն խիեց երեսին: «Քիչ է մնացել մինչև զնալս», — մտածեց նա, և սիրաը թոշունի նման թրթուաց, և հոգու մէջ ծագեց ինչ որ ախրութիւն, ինչ որ կակիծ, ինչպէս ծագում է առհասարակ մի տեղից երկար ժամանակով հեռացողների սըրտում, և խեղդուեց համատարած բերկութեան և ցնծութեան ալիքում:

Վերեւում տարածւում էր գիշերային սև երկինքը, և երկնքի երեսով խորհրդաւոր կերպով սլանում էին սպիտակ ամպերի ահազին քուլաներ, որպէս վիթխարի սպիտակ թոշուններ: Մի ուղղութեամբ էին սլանում նրանք, և նրանց արագ ու անձայն թռիչքը կարծէք մի հզօր կոչ լինէր նոյնպիսի աղաս ու երջանիկ թռիչքի: «Քիչ է մնացել, քիչ» — մտածում էր Զիստեակովը:

Նրա գալուց շատ առաջ էին հաւաքուել հիւրերը վաթսունչորսերորդ համարում: Արդէն թէյ ու օղի խմել էին և պատրաստում էին երգելու: Զիստեակովը յոդնած նստեց մի անկիւնում դարսած վերարկուների վրայ ու սկսեց բարեացակա տիսրութեամբ դիտել իր ընկերներին, — մի ամիս էր մնացել ընդամենը, և նա հեռանալու էր նրանցից երկար ժամանակով, նոյնիսկ ընդ միշտ: Խմբովին երկու ու սանողական երգ երգեցին, իսկ յետոյ առաջ անցան երեք հոդի կանսերվատորիայի աշակերտունի Միխայլովան, որ լաւ սովորանո ձայն ունէր, ինքը տօնատէրը, որ երգում էր ուժեղ ու սիրուն բաս ձայնով, և մի շիկան եր ուսանող, որ տեսնոր էր: Լոռութիւն ալիրեց, և բասը սկսեց երգել միայնակ ու դանդաղ, և Զիստեակովը ցնցուեց, — այնքան անակնկալ սիրուն էր երգը.

ՈԿՈ — ԿՈЙНОЙ ԽՈ-Օ-ՕԿИ ՎԵՇՄԵ ՅՈՒՏ-Ա-ՎԻՍԻՄԵ...

(Բարի գիշեր բոլոր յոդնածներին...)

Հանդիսաւոր անդորրութեամբ, վեճմ թախծով ու սիրով էին համակուած այդ վեհ և հզօրապէս զուսպ հնչիւնները, — ինչ որ մի մեծ ու մութ էութիւն, որպէս ինքը գիշերը, ինչ որ մի ամենատես, ուստի և կարեկցող ու անհունապէս տիսուր էութիւն, հանդարտ պարուրում էր երկիրը իր քնքոյց քօղով, և մինչ երկրի ծայրագոյն եղբերը պէտք է համնէր նրա հզօր և

զուսպ ձայնը: «Բայց, Տէր իմ, մեր մասին է այդ երգը, մեր մասին», — մտածեց Զիստեակովը և ամբողջ մարմնով ձգուեց դէպի երգիչները:

Եւ երբ մարեց վերջին հնչիւնը, մէջ մտաւ հնչուն տենորը ու կրկնեց նոյն խօսքերը, — կարեն թէ երկիրը արձագանդ տուեց այդ կարեկից ու քաղցր խօսքերին, և աղաչանք էր հնչւում նրա աղօթող ձայնում:

— Պոկոյնոյ հօ-օ-օշի վեմ՝ ստա-ա-вшիմъ...

Եւ նոյն վեհ վշտով ու անդորրութեամբ սփուռու էր տարածութեան մէջ խաւարակերպ, առնական բար.

— Весь день свой отдыха не зна-ա-вшիմъ...

(Որոնք ամբողջ օրը հանդիսաւ չեն ունեցել...)

Ինչ որ, արցունքի շիթերի նման, շողողուն ու թանկագին բան ընկաւ երկնքի բարձունքից և թափանցեց լայն ու թաւ բասի խաւարի միջով ու մեղմ, չերմ հառաչով խառնուեց երկը րի հեծեծանքներին.

— Трудомъ купившимъ свой ой по-о-кой!...

(Որոնք աշխատանքով են գնել իրանց հանդիսար...)

«Տէր իմ, Տէր իմ, այդ սա է երգում», — մտածեց Զիստեակովը, դիտելով օրիորդի գունատուած դէմքը: «Օ՛, հոգեակ, մեր մասին է այդ, մեր մասին»:

Եւ երեք ձայները խառնուելով իրար, թափանցելով միմիանց մէջ, ի մի ձուլուելով և մի վեհ ու վշտալի ներդաշնակութիւն կազմելով, կրկնեցին.

— Покойной ночи веъмъ уставшимъ,

Весь день свой отдыха не знаяшимъ,

Трудомъ купившимъ свой по-о-кой!

Յետոյ ուրիշ տիտոր երգեր երգեցին, բայց Զիստեակովը այլևս ոչինչ էր լսում, և նրա ամբողջ էութիւնը թրթռում էր անհուն կարեկցութիւնից գէպի ինքը, որ ամբողջ օրը աշխատում էր անխոնջ, և գէպի ինչ որ մի անդէմ, մեծ էակ, որ կարիք ունէր անդարրութեան, սիրոյ և մեղմ հանգստի:

Նրան սթափեցրեց Ռայկօ Վուկիչի շուրջը սկսուած ուրախ ու աղմկալից խօսակցութիւնը: Դարձեալ ձեռք էին առել Ռայկօին, իսկ նա՝ սովորութեան հակառակ՝ լուռ էր, և միմիայն կրէտի խայթոցի պէս սուր աշքերն արագ-արագ անցնում էին մէկի վրայից միւսին, և շարժւում էր երկճիւղ, ցցամազ կզակը:

— Ասա տեսնենք, Ռայկօ, — հարցնում էր Վանկա Կոստիւրինը, — ձերոնց բոլորի քթերն էլ կեռ են քոնի նման:

Ռայկօն դանդաղ կերպով պատասխանեց.

— Այս քանի օրերս սահմանի վրայ սպանել են Բոյովիչ  
անունով մի սերբի, Թիւրքերն են մորթել.

Եւ ամենքը պարզ երեակայեցին այդ Բոյովիչ ազգանու-  
նով մորթուած սերբին, որի մեռելտիպ ղեղին ըիթը կեռ է  
Ռայկօֆ քթի նման, և որի կոկորդի վրայ երեւմ է մի լայն  
ու սև վէրք. Տպաւորութիւնը անախորժ էր, և Կոստիւրինը  
շինծու ծիծաղով ասաց.

— Ի՞նչ մեծ բան է: Տեղումը չատ կան:

Ռայկօն քսոմնեց, գունատուեց, և երկձիւղ կզակի փշերը  
դողացին: Եւ երբ սկսեց խօսել, ձայնը մետալական խիստ հըն-  
չիւն ունէր:

— Դու խարեբայ ես: Ինչու ես ոռւսաց ժողովրդական պար  
պարում: Դու հայրենիք չ'ունես, տուն չ'ունես: Դու խոզ ես:

Պատասխանը Զիստեակովը տուեց, կարծես թէ նրան էր  
ուղղուած յանդիմանութիւնը: Խուլ ձայնով և հանդիսա ասաց.

— Իսկ դու, Ռայկօ, սիրում ես Սերբիան:

— Իշարկէ՝ սիրում եմ:

Ամենքը լուռ էին, և Ռայկօն վերցրեց հացի կլոր դանակը  
ու թափ տալով օդի մէջ՝ վայրենի կերպով գոռաց.

— Կը սպանեմ Ա՛խ, եթէ իմանաք՝ նրբան սաստիկ է զայ-  
րոյթս: Ի՞նչպէս կակծում է սիրոս: Ախ, ինչպէս կակծում է  
սիրոս...

Ուժգին կերպով դանակը նետեց դէպի պատը, և դանակը  
տափակ կողմով դիպաւ պատին ու զրնգալով յետ թռաւ: Ռայ-  
կօն առանց ընկերների վրայ նայելու դուրս եկաւ սենեակից:

Կէս ժամ անցած՝ Զիստեակովը զնաց նրա յետեից. Նրա  
խեղճը գալիս էր փոքրիկ Ռայկօի վրայ, որ այդքան սաստիկ  
սիրում էր իր փոքրիկ, իրան այդպէս մահացու կակիծ պատճա-  
ռող հայրենիքը: Երբ նա զեռ անցնում էր երկարուկ, կիսամութ  
միջանցքով՝ մոլորուելով միակերպ, միանման դռների մէջ, ա-  
կանջին հասան ինչ որ ոռնոցի կամ օքնակոչի նման օտարոտի  
հնչիններ: Դռներից մէկի վրայ կաւիճով զրուած էր «Ռայկօ  
Վուկիչ», և այնտեղից էին զալիս այդ տարօրինակ և այժմ ար-  
դէն բարձրածայն հնչինները: Զիստեակովի թիւթիւկոցին պա-  
տասխան չ'եղաւ, և նա ներս մտաւ՝ պատուհանի լուսաւոր ֆոնի  
վրայ աղօտ կերպով որոշելով Ռայկօի փոքրիկ, սրած կերպա-  
րանքը, — մութ սենեակի պատուհանում նստած Ռայկօն երգում  
էր արտասովոր բարձր կոկորդային ձայնով:

— Ռայկօ, — կամաց ձայն տուեց Զիստեակովը:

Բայց Ռայկօն չէր լսում: Նա չը լսեց դռան թրխկոցը, չը  
լսեց Զիստեակովի ոտնածայնն ու իր անունը, նա երգում էր՝

աշըերը յառած դիմացի մրոտած բարձր աղիւսէ պատին։ Հեռաւոր հայրենիքի մասին էր երգում. նրա խուլ տանջանկները, որբացած մայրերի ու կանանց արցունքներն էր ողբում. աղաչում էր իր հեռաւոր հայրենիքին՝ տանել իրան, փոքրիկ Ռայկօին ու թագել հայրենի հոգում և երջանկացնել իրան՝ հնարաւորութիւն տալով մահից առաջ համբուրելու իր ծննդավայրի զետինը. կատաղի վրէ ժիմնդրութեան մասին էր երգում. սիրոյ և կարեկցութեան մասին էր երգում դէպի յաղթուած եղբայրները, սերք Բոյովիչի մասին, որի Կոկորդի վրայ լայն ու սև վէրք է երեւմ, նրա մասին, թէ ինչպէս սաստիկ կոկծում է փոքրիկ Ռայկօի սիրտը, որ ինքը անջատուած, է մայր հայրենիքից, իր թշուառ, բազմատանջ հայրենիքից։

Զիստեակովը չէր հասկանում երգի բառերը, բայց լսում էր հնչյանները, իսկ այդ հնչիւնները՝ վայրենի, բիրտ ու տարերային, ինչպէս մայր երկրի հառաչները, և աւելի նման անտէր մնացած շան ոռնոցի, քան մարդկային երգի, տոգորուած էին այնպիսի անել թախծով ու կծու ատելութեամբ, որ առանց բառերի էլ պարզ կերպով երեւում էր երգչի արթւնուայ սիրտը։

Ռայկօի ձայնը մարեց՝ մի բարձր, զայրալից զիլ հնչիւն արձակելով, և երկու ընկերները երկար ժամանակ մնացին այդպէս լուռ նստած։ Յետոյ Զիստեակովը աւելի մօտեցաւ Ռայկօյին ու տեսաւ գայլի աշբերի նման վառուող չոր ու զայրագին աչքերը։

—Ռայկօ, —ասաց, —գաղուց է՝ հայրենիքով չես տեսել, Գնատես. ես փող կը տամ քեզ։ Աւելորդ փող ունեմ։

—Տուն կայ՝ այնտեղ, —մտախոհ ասաց Ռայկօն։

—Ի՞նչ տուն։

—Տուն էլի։ Զես իմանում՝ տունն ինչպէս է լինում։ Եւ երբ սայլը անցնում է մօտով, ճռում է, վայ-վայ է ասում։

—Ա՛ռ այս փողը, Ռայկօ։

—Մի խանդարի ինձ, ասաց Ռայկօն։ —Մի խանդարի, ինդրեմ։ Գնա ձերոնց մօտ։ Ինձ մենակ թող։ Սիրտս այրւում է կոկծից։

Բայց Զիստեակովը չը գնաց ընկերների մօտ, այլ բարձր-րացաւ իր սենեակը և մթնում Ռայկօի պէս նստեց պատուհանում ու սկսեց նայել երկնքին, որի երեսին ինչ որ լաւ բան կարդաց այսօր։ Էլի այնպէս խորհրդաւոր ու լուռ սլանում էին՝ վիթխարի սպիտակ թռչունների նման ամպերը, և նրանց արանքին վիճերի պէս սեին էր տալիս անյատակ երկինքը, բայց օտար և սասն էր այժմ այդ երջանիկ թռիչքը և ոչինչ չէր առում մտազբաղ մարդուն։

— «Շուտով ես էլ այդպէս կը թռչեմ, — մտածում էր Զիստեակովը, աշխատելով նորոգել մի ժամ առաջ զգացած ազատութեան ու թեթևութեան զգացմունքը, բայց կրծքումը ծագում էր մի ուրիշ, անորոշ ու զօրեղ զգացմունք, ծագում էր ու սաստկանում և թրթոում ու թրպրառում այնտեղ, ինչպէս թռչունը գանդակում եւ նա հասկացաւ, թէ ինչ էր այդ. նա հասկացաւ, որ ինքն էլ Ռայկօի պէս սաստիկ ուզում էր երգել և նոյնպէս երգել հայրենիքի մասին; Եւ նա ուրախացաւ, որ հասկացաւ այդ, ժպտաց և բոլորովին պարզ զգաց կրծքումը փակուած աղաչանքի ձայները և ջերմ ու հնչուն արցունքները: Բերանը բաց արեց, բայց մտածեց, որ յանկարծ մէկը կարող է ներս ևանել ու տեսնել իրան երգելիս, և ամաչելով այդ բանից՝ գուոք կողպեց բանալիի երկու պտոյտով: Եւ գէպի պատուհանը վերագառնալիս, չը գիտեմ ինչու, ոտների ծայրերի վրայ էր գընում:

— Դէ, — ասաց ինքն իրան ու սկսեց երգել ինչ որ մի բան առանց բառերի — և այնքան գծուծ, այնքան անվճուական էր իր արձակած ու ողորմելի ջղաձկութեան մէջ մնուած ձայնը, որ սարսափ եկաւ վրան: «Պէտք է խօսքեր գտնել, առանց բառերի չի կարելի», — շտապեց արգարացնել նա ինքն իրան ու սկսեց բառեր փնտրել, և շատ բառեր անցան մաքովը, բայց չը կար նրանց մէջ և ոչ մէկը, որ բղխէր հայրենասիրութեան զգացմունքից: Նա լարեց իր ամբողջ յիշողութիւնը, ամբողջ երեակայութիւնը, փնտրեց անցեալում, փնտրեց կարդացած գրքերում — և շատ կային հնչուն ու զեղեցիկ խօսքեր, բայց չը կար և ոչ մէկը, որով կարողանար տանջուող զաւակը դիմել իր մայր-հայրենիքին: Նա շատ լաւ զգում էր այդ խօսքը, նա տեսնում էր այդ խօսքը և գիտէր, թէ ինչով է զանազանուում ուրիշ խօսքերից, — միւս բոլոր խօսքերը տափակ են ու աղքատ, ինչպէս եկեղեցու զոան մուրացկանները, իսկ այդ խօսքը թաթահուած է արեան ու արցունքի մէջ, ջերմ է, ինչպէս հրաշէկ ածուխը, և պայծառ, ինչպէս երկնային հուրը, — և այդ խօսքը պտտում էր լեզուի ծայրին, բայց չէր կարողանում գտնել: Եւ այնպէս դատարկ ու աղքատ զգաց իրան, ինչպէս յետին, ամենայետին մուրացկանը, որի հոգին չոր է ու ցամաք, ինչպէս իրան նետուած ողորմութիւնը:

— Տէր Աստուած, Տէր Աստուած, — ինչպիսի բան է այս բայց չէ որ ես լաւ մարդ եմ, լաւ մարդ:

Եւ մտածեց, որ աւելի շուտ կարող է գտնել փնտրածը, եթէ սկսի գրել: Դողդոջուն ձեռներով կոտրատելով լուցկիները՝ վառեց մոմը, կատաղաբար վայր գցեց սեղանից գերմաններէնի

դասագիրքը, մի թերթ թուղթ գրեց առաջը ու գլուխը կախ գցած՝ խոր մտածմունքի մէջ ընկաւ։ Եւ ձեռքը՝ խղբզելով ու անվճառական կերպով՝ գրեց։

«Հայրենիք»։

Ու կանգ առաւ։ Ու աւելի հաստատ կերպով կրկնեց։

—Հայրենիք։

Ու արագ-արագ, խոշոր տառերով վերջացրեց։

—Ներիք ինձ։

Զիսենակովը նայեց իր գրածին և երեսնիվայր ընկաւ թղթի վրայ ու լաց եղաւ կարեկցութեան զգացմունքից դէպի հայրենիքը, դէպի ինքը, դէպի բոլոր աշխատաւորները, որոնք չը գիտեն, թէ ինչ է հանգիստը։ Եւ նա սարսափ զգաց, որ կարող էր հեռանալ հայրենիքից երկար ժամանակով։ Նոյնիսկ ընդմիշտ ու մեռնել այնտեղ, օտար երկրում և մարող լսողութեամբ ականջ դնել խորթ ու օտար խօսքերի։ Եւ հասկացաւ, որ չի կարող ապրել առանց հայրենիքի ու չի կարող երջանիկ լինել, մինչ թշուաս է հայրենիքը, և այդ նոր զգացմունքի մէջ կար հզօր բերկրութիւն և հզօր, տարերային, հաղարածայն վիշտ։ Այդ զգացմունքը խորտակեց այն շղթաները, որոնց մէջ տառապում էր նրա հոգին, ի մի ձուլեց նրա հոգին իր անյայտ, բիւրանձն, բազմատանջ եղբօր հոգու հետ, և կարծես հաղարաւոր հրեղէն սրտեր երերացին նրա հիւանդու, ցաւատանջ կրծքում։ Եւ ջերմ արցունք թափելով, ասաց։

—Ա՛ռ ինձ, հայրենիք։

Իսկ ներքեռում նորից սկսեց երգել Ռայկօն, և վայրենօրէն աղատ ու անվճներ էին զայրագին ու վշտու հնչիւնները նրա երգի։

Թարգ. Տ. Յ.